

Համարը N 417  
Տիպը Որոշում  
Սկզբնաղբյուրը ԼՂՀ Կառավարության  
Ընդունող մարմինը ԼՂՀ Կարգապետ  
Ստորագրող մարմինը ԼՂՀ Կարգապետ  
Վավերացնող մարմինը  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 16.11.2004

Տեսակը Մայր  
Կարգավիճակը Գործում է  
Ընդունման վայրը Ստեփանակերտ  
Ընդունման ամսաթիվը 16.11.2004  
Ստորագրման ամսաթիվը 16.11.2004  
Վավերացման ամսաթիվը  
Ուժը կորցնելու ամսաթիվը

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱԶԱՏ ԶՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

"16" նոյեմբերի 2004թ.

N 417

ք.Ստեփանակերտ

#### ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 22-րդ հոդվածին և 121-րդ հոդվածի 5-րդ մասի 49-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո թ ո թ 2 ու մ է.**

Հաստատել **ազատ ջրօգտագործման** կարգը՝ համաձայն հավելվածի:

ԼՂՀ ԿԱՐԳԱԿԵՏ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված  
ԼՂՀ կառավարության  
2004թ. նոյեմբերի 16-ի  
թիվ 417 որոշման

#### Կ Ա Ր Գ

#### ԱԶԱՏ ԶՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են **ազատ ջրօգտագործման** առնչվող իրավահարաբերությունները, բացառությամբ, զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսների, անձի սեփականություն հանդիսացող հողամասում գրունտային ջրերի, հակահորդեհային նպատակներով **ազատ ջրօգտագործման**, որոնք կանոնակարգվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանված կարգերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության /այսուհետ՝ վարչություն/ կողմից ջրօգտագործողի հայտի գնահատման արդյունքում ջրօգտագործողը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 22-րդ հոդվածի պահանջներին համապատասխան կարող է **ազատվել ջրօգտագործման** թույլտվություն ստանալու պահանջից նաև այն դեպքում, երբ՝

ա/ ջրօգտագործումը նպաստում է ջրի ազգային ծրագրով սահմանված բնապահպանական խնդիրների լուծմանը.

բ/ իրականացվում է Էկոլոգիապես ընդունելի տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված փորձագիտահետազոտական և ուսումնական նպատակներով ջրային ռեսուրսի ժամանակավոր օգտագործում՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան փորձաքննական դրական եզրակացության առկայությամբ.

գ/ ջուրն օգտագործվում է ջրային ռեսուրսի հոսքի ուղղությամբ /գետաբերանից դեպի գետաթափ վայրը/՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանին հարակից վերջին բնակավայրի վարչական տարածքում՝ ջրի որակական ցուցանիշներին համապատասխան /հաշվառման պայմանով/:

3. **Ազատ** ջրօգտագործող հանդիսացող իրավաբանական անձը կարող է իրականացնել **ազատ ջրօգտագործում**՝ դրա մասին վարչություն տեղեկատվություն ներկայացնելուց հետո:

Իրավաբանական անձը **ջրօգտագործման** հաշվառման համար վարչություն է ներկայացնում պետական ռեգիստրում գրանցման վկայականի պատճենը՝ կշեղվելով ջրօգտագործողի անվանումը, ջրային ռեսուրսի անվանումը և տեղեկատվություն **ջրօգտագործման** նպատակի, ջրային ռեսուրսի մակերեսի, ափերի, դրանց հարակից տարածքների, ինչպես նաև ջրային միջավայրի օգտագործման մասին:

4. **Ազատ** ջրօգտագործումը չպետք է հանգեցնի ջրերի ստանդարտների խախտմանը, **ջրօգտագործման** մասով՝ այլ ջրօգտագործողների իրավունքների սահմանափակմանը և

պետք է համապատասխանի ջրավազանային կառավարման պայմաններին:

5. Վարչությունը հիմք ընդունելով ջրավազանային կառավարման մարմնի ներկայացրած տեղեկատվությունը, կարող է տվյալ **ազատ** ջրօգտագործումը սահմանափակել **ջրօգտագործման** թույլտվությամբ, երբ այդպիսի **ազատ** ջրօգտագործումը՝ ա/ սպառնում է կամ կարող է սպառնալ տվյալ ջրավազանային տարածքի ազգային ջրային պաշարի նվազեցմանը.

բ/ խախտում է կամ կարող է խախտել ջրի նկատմամբ պահանջարկը՝ ըստ սահմանված գերակայությունների:

6. Վարչությունը, հիմք ընդունելով մարդկանց առողջության համար ջրային ռեսուրսի վտանգավորության մասին առողջապահության բնագավառում լիազոր մարմնի ներկայացրած տեղեկատվությունը, կարող է սահմանափակել կամ կասեցնել **ազատ** ջրօգտագործումը՝ ըստ ջրային ռեսուրսի ռեսուրսների/ կամ դրա /դրանց/ մասի /մասերի/, եթե՝

ա/ տվյալ տարածաշրջանում հայտնաբերվել են համաճարակի դեպքեր, և առկա է ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների տարածման վտանգ.

բ/ ջրային ռեսուրսն աղտոտված է այն չափով, որ կարող է վնաս հասցնել մարդկանց կյանքին և առողջությանը:

7. Սույն կարգի 6-րդ կետով սահմանված պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում՝

ա/ վարչությունը՝ տվյալ պայմանն ի հայտ գալուց հետո ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում զանգվածային լրատվության միջոցներով պետք է

հայտարարի **ազատ ջրօգտագործման** սահմանափակման կամ կասեցման մասին, նշելով՝

ջրային ռեսուրսը /ռեսուրսները/ կամ դրա /դրանց/ մասը /մասերը/, որից /որոնցից/ արգելվում է **ազատ** ջրօգտագործումը,

ջրավազանը, որտեղ գործում է տվյալ սահմանափակումը,

**ազատ ջրօգտագործման** սահմանափակման կամ կասեցման պատճառները և ժամկետը /եթե այն կանխատեսելի է/,

**ազատ** ջրօգտագործումը չսահմանափակելու, չկասեցնելու հնարավոր հետևանքները.

բ/ վարչությունն **ազատ ջրօգտագործման** սահմանափակումների պատճառները վերացնելուց հետո մեկ օրվա ընթացքում զանգվածային լրատվության միջոցներով իրազեկում է հայտարարված վտանգների /պատճառների/ վերացման մասին:

8. Սույն կարգի պահանջների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 117-րդ հոդվածով սահմանված ընթացակարգով:

**ԼՂՀ կառավարության աշխատակա  
զմի  
ղեկավար-նախարար**

**Ս. Գրիգորյան**